01/10.1/2269-10
2010-03-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Նախագծի ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտությանը։

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների սղությունն ու այն հանգամանքը, որ տնտեսությունում ոչ բնական՝ դժվար կանխատեսվող զարգացումների ծավալման պայմաններում հնարավոր չէ հստակ պատկերացնել առաջիկա տարիների զարգացումների արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրատեսական չի համարում օրենքի նախագծի ֆինանսական ապահովումը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

AJV-08-15

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-809-02.02.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Հանրակրթության մասինե Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի թիվ ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 6-րդ մասի «համաձայն տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքիե բառերը փոխարինել «ոչ պակաս միջին մանկավարժական աշխատավարձի 50 տոկոսի չափովե բառերով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թ. հունվարի մեկից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՕՐԻՆԱԳԾԻ

Օրինագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է սահմանամերձ, բարձր լեռնային եւ լեռնային բնակավայրերի ուսուցիչների սոցիալական վիճակի բարելավման անհրաժեշտությամբ։